

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Тифлис. Редакция «Мшакъ».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաբանները բառին 2 կոպէկ:

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԱԳՈՐԾԻՆ

Մեր հեռագիրները. Թիֆլիսի վաղեմի և նոր հեռագիրները. Վերջին հեռագիրները. Վերջին տեղեկութիւնները Կ. Պոլսից. Հայոց հարցը և եւրոպական մամուլը. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արեւմտեան պատմական. Նամակ Ասորիականից. Նամակ Արաբականից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից. Նամակ Ասորիականից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թիֆլիսից Հայաստանից:

ՄԵՐ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

(Մեր թղթակիցներից)

Երէկ, օգոստոսի 25-ին, ստացանք հեռագրով հեռագիրը, թիֆլիսից սահմանադրւելի, Սարգիսիւնի վրայով:

Օգոստոսի 25-ին երկրում պէտք է այցելէ Շաբիր-փաշան, որը իբրեւ թէ պէտք է կարգայ երգրում մէջ՝ սուլթանի ֆերմանը: Ինչին է վերաբերում այդ ֆերմանը՝ յայտնի չէ:

Օգոստոսի 25-ից, Պետերբուրգից, մեր թղթակիցը մեզ հեռագրում է հետեւեալը (այդ նոյն հեռագիրը ուղարկել է և Ռուսաց զործակալութիւնը):

«Վիէնայից» «Новости» լրագրին հեռագրում են օգոստոսի 24-ից. «Neue Freie Presse» լրագրի խօսքով, տան և եօթ հայ աւազակներ յարձակւելին Կամախում, թիֆլիսից Հայաստանում, փոխ-գնդապետ Բէշկովի վրա, սպանելին սերժանտին, վիրաւորելին ուղեղային և յարաւակեցին 300 ֆունտ փող: Նրանց բռնելու համար ուղարկվեցին երկու զօրաբաժիններ, որոնք սպանելին 4 աւազակներին, վիրաւորելին մէկին, կաշառաւորելին երեքին: Աւազակները վիրաւորեցին երկու օֆիցերին և երեք զինուորականներին:

Հարկաւոր են համարում նկատել, որ Վիէնայի այդ հեռագիրը բոլորովին այլ դոյն է տալիս Կամախի դէպքերի սկզբնա-

ւորութեանը, քան թէ այն, որ մենք հաղորդեցինք «Մշակ» մէջ:

Թիֆլիսից կառավարութեան յատկանշի սովորութիւնն է, ամեն մի կոտորածի և աւերածի դէպքում մէկ զքը հայերի վրա դրել: Այդպէս արեւ Նա Սասունի կոտորածի ժամանակ, այդպէս է անում այժմ՝ Կամախի աւերածիցների ժամանակ:

ԹԻՒՐԻՒՄՆ ՎԱՆՅՈՐԾՈՒՄ Ե ԱՆԳԼԱՅԻՆ

Մեծ-Բրիտանիան չի վստահանալ զէնք վերջին թիֆլիսի դէմ, որովհետեւ դա կարող է ռաի կանգնելը Հայկաստանի 40 միլիոն մահմեդականներին, — ասում են հայոց հարցի վարագործած թշնամիները:

Նեթ-Մեծ-Բրիտանիան կը փորձի զէնքի ոյժով ընդնել սուլթանի կամքը, այն ժամանակ մահմեդական քարոզիչները ոտքի կը կանգնեն Հայկաստանի միլիոնաւոր մահմեդականներին ընդդէմ Անգլիայի և ի պաշտպանութիւն Մեծ-Խալիֆի, կրկնում են իրանք թիֆլիսը, անշափ ուղարկում թիֆլիս:

Այդպէս ուրեմն, Թիֆլիսի ոչ թէ միայն դիտաւորութիւն չունի գոհացում տալ հայերին և լուծել հայոց հարցը, ոչ թէ միայն երկիւղ չէ կրում եւրոպայի խիստ միջոցներէն, — այլ նոյն իսկ սպառնում է քրիստոնէայ աշխարհին, յատկապէս Մեծ-Բրիտանիային, հրատարակել կրօնական պատերազմ, ռաի կանգնելը բոլոր մահմեդականներին, ապստամբելը զանազան տեղերի մահմեդականներին տիրող կառավարութիւններին դէմ, որպէս զի դրանով ստիպէ եւրոպային ձեռք վերցնել հայոց հարցից:

Բայց հիմնաւոր են արդեօք օսմանեան կառավարութեան այդ յայտերը և սպառնալիքները, — ասա հարցը:

Քաղաքակիրթ աշխարհը չէ ցանկանում և երբեք չը պէտք է ցանկանայ անարդար տեղից թափել մինչև իսկ մի հատ մահ-

մեդական արիւնք, որոնք նոյնքան իրաւունք ունեն ազատ, հանգիստ կեցով դաւանելու իրանց կրօնը, որքան և քրիստոնէաները: Այդ, ի հարկէ, լաւ գիտէ և ինքը թիֆլիսից սուլթանը:

Սակայն, երբ մի ամբողջ մահմեդական կառավարութիւն իրան թոյլ է տալիս, քրիստոնէայ աշխարհի առաջ, անսանձ կեցով, անպատեղ քրիստոնէական կրօնը, հալածել մի ամբողջ ազգ, զինաւորապէս այն պատճառով, որ նա դաւանում է ոչ թէ Մահմէդի, այլ Քրիստոսի վարդապետութիւնը, երբ, ասում ենք, թիֆլիսից կառավարութիւնը իրան իրաւունք է համարում անարգել, հալածել, սպանել, կոշտատել քրիստոնէայ-հային, քրիստոնէայ-նին, քրիստոնէայ-բողոքարին, քրիստոնէայ-մակեդոնացուն, ինչ իրաւունքով նա կարծում է, որ քրիստոնէայ կառավարութիւնները կը շարունակեն անպատեղ թողնել մահմեդական տարրը, երբ նա օրից օր ներշնչվում է ամենատուր ֆանատիկոսութեամբ և կատաղութեամբ դէպի այն բոլորը, ինչ որ կրում է քրիստոնէութեան անունը:

Այդ մի կողմից: Իսկ միւս կողմից Մեծ-Բրիտանիան, իբրեւ մի զօրեղ, հսկայական կառավարութիւն, չէ կարող թոյլ տալ, որ Հայկաստանի մահմեդական ժողովրդի մէջ, Թիֆլիսից ուղարկված հաղարարուր ծրուած զերվիչները և քարոզիչները շտրկուտարածվի այն գաղափարը, թէ անգլիական կառավարութիւնը կողմնաւոր կոտորել սուլթանի յամառութիւնը զէնքի ոյժով: Բայց վախենում է իր մահմեդական հպատակներէն, Հեղինաստանում ապրող մահմեդականների ապստամբութիւնից:

Ոչ մի կառավարութիւն, աւելի ևս բրիտանական կառավարութիւնը, որ զիտէ բարձր պահել իր վարկը, իր պրեստիժը, չի թոյլ տալ, որ իր հպատակ մահմեդական ազգաբնակչութիւնը հասնի Անգլիայի համար այդ վիրաւորական եղբայրացութեան, — այդ պատճառով, այս նոր սպառնալիքը,

թէ սուլթանը ոտքի կը կանգնէ անգլիական հպատակ մահմեդական աշխարհը, 40 միլիոն իսլամներին, ոչ թէ չէ կարող վախեցնել Մեծ-Բրիտանիային, այլ, հաւանորէն, վիրաւորելով նրա ինքնասիրութիւնը, կը ստիպի աւելի խիստ լինել:

Կողոպտել, հալածել քրիստոնէականներին, անպատեղ քրիստոնէական կրօնը, և ապա սպառնալ, թէ ոտքի կը կանգնենք ամբողջ մահմեդական աշխարհը, եթէ համարձակվէք մագի չափ անգամ խախտել սուլթանի իշխանութիւնը, դա վերջին միջոցն է, որին դիմում է յուսահատ օսմանեան կառավարութիւնը:

Անօգուտ միջոց...

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

(Ռուսաց զործակալութեան)

Դոնոսից ստացանք Բէյութի զործակալութեան հետեւեալ հեռագիրը, օգոստոսի 24-ից:

«Համայնքների ժողովում արտաքին գործերի միւնիստրի օգնականը յայտնեց, որ Բ. Գոնից մի քանի հաղորդագրութիւններ են ստացված՝ Հայաստանի համար պետութիւնների կողմից առաջարկված բարենորոգումներին վերաբերմամբ:

«Այդ հաղորդագրութիւնները չէ կարելի գոհացուցիչ համարել:

«Գերմանիան, Աւստրո-Ունգարիան և Իտալիան դեռ ևս պաշտօնապէս իրանց կարծիքը չեն յայտնել հայկական բարենորոգումների նախագծի վերաբերմամբ, բայց կարելի է կարծել, որ նրանք համակրում են Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի սկսած գործին:

«Այն լուրը, որ իբր թէ այդ պետութիւնները, հաւաքական ծովային ցոյցի միջոցով, կը պաշտպանեն Բ. Գրան ուղղած առաջարկութիւնները, — անհիմն է:»

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՒՐԻՒՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

(Նուէր է միւլ Դիւլ օնին)

I

Էրզրում, օգոստոսի 1-ին

Յուլիսի 10-ին ձեռ ուղարկած հեռագիրը՝ քննելի յանձնաժողովի Մուլից հեռանալու մասին, անշուշտ ստացած կը լինէր: Հէնց որ քննելի յանձնաժողովը ճանապարհ ընկաւ դէպի Էրզրում, տեղական ժողովուրդը, մանաւանդ չրջակայ գաւառակների տնային և բարբարոս կառավարիչները և համրիչները զլաւորները, զղբըղայքը ու տալիս ու վրա արին ամբողջ երկիրը:

— Կէս, զնայէք և ձեր գեաւուր թագաւորներին խաբար տարէք. ձեռ պէս գեաւուրներ շատ ենք ձանքու գրել, ասում էին գիւղական հրճուանքով և պաշտօնեայ և ոչ պաշտօնեայ և անմիտ միախառն մարմինը, անցնելով հայոց թաղերում և հայ գիւղերով, հասկացնելով վերջիններին, թէ դուք դարձեալ մեր գերին, մեր ստրկներն եք:

Սակայն ներքուստ այդպէս չէր խօսում, այդպէս չէր զգում բարբարոս կառավարութեան սիրտն ու հոգին, երբ ճանապարհի երկարութեամբ դէպի Էրզրում անցնում էր յուղարկաւորութիւնը: Առջինից չարեշար անցնում էր 120 հոգուց բաղկացած համրիչէի հեծելազօր խումբը, որին հետեւում էին սուլթանի քննիչ-յանձնաժողովի անդամները, ապա եւրոպական քննիչ

յանձնաժողովը, իսկ սրանցից յետոյ մօտ 150 սուլթանի, հեծելազօր, իրանց փաշաներով: Չինուրական նուագաւորներ լուեց և իր վերջին միաս բարեն ասելով՝ հեռացաւ. իսկ յուղարկաւորութիւնը դանդաղ և յուսահատ քայլերով առաջ էր գնում: Սուլթանի հաւատարմի քննիչները, ամօթխած, կանայի համեստութեամբ ակամայ գնում էին լուռ եւրոպացիների առջինից, քաշ տալով իրանց ետից սուլթանի մեռած յոյսը՝ յոյս, որ կարմիր ներկից սատանցիներին անմեղ արինալով, յոյս՝ որը սուլթանը համրել թաղեց Բօսֆորի ալիքներում:

Սակայն մեր դրութիւնը մաղաչաւ անգամ չը լինէր: Երբ ինչ է, բանտարկեալների մի ըստուար բազմութիւն ազատվել և մի քանի մայրեր ուրախացան, բայց դրա հակառակ՝ ազատված բանտարկեալների մեծամասնութեան բաժին եղաւ միմիայն կատաղի վրէժնալիքներ և լաց ու կոծ: Տարիներով բանտերի խորշերում չղթալակալ հայը, դրսի աշխարհի հետ ոչ մի յարաբերութիւն չունեցող թշուառ բանտարկեալը, ազատվելով այդ կապանքներից՝ շտապեց իր վաթմանը՝ հօր օջախը, բայց ասով, այդ բոլորի վաթմանը, նա մի կոյտ մոլոր միայն գտաւ...

Մենք էլ լսեցինք, որ սուլթանը իբր թէ վերջնականապէս ընդունել է բարենորոգութիւնների ծրագիրը: Չը գիտենք, ինչպէս են մտածում մեզանից հեռու ապրող հայ եղբայրները և քոյրերը. կամ ինչ են մտածում և ինչ զգում հայաստանցի կոյր հայերը, որոնք միմիայն ուղեւորել գիտեն (խօսք մեծամասնութեան մասին է): Բայց մենք այդքանը կասինք՝ Կ. Պոլսի պտրիաքարանի գիւմաստան մէջ հանդուցեալ սահմանաւորութեան տօնի վրա մի տօն են աւելա-

ցաւ: Իրականապէս դրանից դուրս ոչինչ կար է չը կայ:

Մենք գտնվում ենք նոյն անորոշ, անմիջիցս դրութեան մէջ, չըպագաւորված նոյն ապականված միջնորդութիւն տիրում են նոյն վայրերի կարգերը, միայն աւելի կատաղի կեցով, ինչ իսկ մեզ վրա նոյն բաշխուղեղները, էլի նոյն կեղեքողները և նրանց բռնութեան տակ ձնչլող գոգից դուրի և պատեղ ոտնակոխ եղած հայ ազգը:

Յաւալի է շատ ցաւալի, որ ամբողջ հայութիւնը դիտենալով հանդերձ այդ բոլորը և մեր դաւան ու անկանելի վիճակը, անտարբեր է մնում ձեռք է, ձեռ ականջները լցված են Հայաստանի վերաբերմամբ թշուառ և անմիջիցս տեղեկութիւններով, բայց և այնպէս անկարող էր, բառի բուն նշանակութեամբ, մի որոշ գաղափար կազմել, թէ ինչ կը նշանակէ մահմեդական մի վայր ենի ազգի, մի գաղաւթաւոր և բարբարոս կառավարութեան հովանաւորութեան տակ՝ հպատակ լինել, ստրկով լինել: Յաւալցութիւններ յայտնելով, միախառնել կաղմեղով, հայոց ազգի կենացը պարզելով և մի քանի բուլբուլներ ծախելով մեր վէրքը չի բուժվի: Այդքան գեղեցիկ խօսքերը և ֆրազների հետ միասին աչքի առաջ ունեցեք, որ Հայաստանը կործանվում է, ժողովուրդը ոչնչանում:

Օր աւուր մեր դրութիւնը վատթարանում է և մեզ ծայրահեղ յուսահատութեան մէջ գցում: Ներքեց, որ կրկին և կրկին ձեռ գլխացաւնք պատճառելու համար մի քանի տխուր տեղեկութիւններ պիտի հաղորդենք, որոնք պատահել են հէնց քննիչ յանձնաժողովի օրով՝ հրաւրանից յետոյ: Միայն ընդունել:

Լու լուրը տարածվելուց անմիջապէս յետոյ, միաժամանակ երկրի ամեն ծայրերից, ամեն անկիւններից տեղացին հայ գիւղացու գանգատները և նրանց կրած տառապանքների նկարագիրները: Անիշխանութիւնը կատարեալապէս տիրել է ամեն տեղ: Երբեք այս ստորեման սանձարձակ ու բացարձակ կողոպտու, աւարաւորութիւն, բռնաբաւորութիւններ, սպանութիւններ և կատաղի վրէժնալիքներ տեղի չեն ունեցել այս երկրում, որքան այժմ, երբ բարենորոգումների ծրագիրը սուլթանը «միջոցը ալիքի» է արել և, նորանոր կատարեալագործութեան հասած, չարիքներ է ստեղծում հայ ազգը կործանելու համար:

Նոյնուի Գովանտիկ, Գարաչօպան և Գարաբէօի-րի գիւղերում կըրկաւորաւոր, հարկահանները, յիւնապետ Հատանի և Գովանտի հետ միասին, քառասուն ձիաւորներով, բանտարկում են տանուտէրերին և գիւղի մեծամեծներին. բանտարկում են նաև 25 հոգի գեղանի հարսներ և աղջիկներ, սրանց հետ էլ երկու հօգի՝ 14—15 տարեկան սպանիներ և ապա պահանջում են. նախ՝ որ գիւղացիք տան կըրկաւորաւոր մի վաւերացրած ստացական, իբր թէ վերջինս վճարած լինի գիւղացիներին, յունկարից մինչ յուլիսի վերջերը՝ բոլոր այն ծախսերը, որոնք արված են թէ իր, թէ զօրքի և թէ ձիերի համար: Գիւղացիք իսկոյն տալիս են կըրկաւորաւոր ուղած թուղթը, միայն թէ իրանց ազատէ այդ տանջանքներից: Երկրորդ՝ կարգաւոր գիւղացուց առաջ հին բուլաներ և մի քանի թղթի կտորներ, ասում են՝ թէ հրաման է որ անմիջապէս բոլոր հարկերը վճարեն, հակառակ դէպքում բոլորից էլ սուլթանի հրամանով կենդանի կայրենք և սրի կանցնենք:

թէ պաշտպանութիւն ճշնշկած, հարստանարված հայերի: Էջնց այդ պատճառով մենք չենք կարող լուծել ման տալ Պետերբուրգի լրագրի անհիմն, անտեղի ու համարձակ ակնարկը մեր հաղորդած տեղեկութիւնների մասին:

Թող յայտնի լինի Ստվորինի խմբագրութեանը, որ մենք բացարձակ կերպով բողոքել ենք և կը բողոքենք ոչ թէ միայն այնպիսի անարդար և նենգամիտ յարձակմունքների դէմ, որ զանազան վարձկան թերթեր ուղղում են դէպի հայոց հարցը, այլ և այն սուտ և չինձռն տեղեկութիւնների դէմ, որ շատ անգամ՝ նոյն իսկ հայոց լրագրիները հաղորդում են իբր թէ ի պաշտպանութիւն հայոց հարցի:

Մենք դէմ ենք սուտին, ով և հաղորդէր նրան՝ հայոց, թէ ուսաց լրագիրը: Մենք ատում ենք ամեն օր իրանց համոզմունքը փոխող հրապարակախօսներին, լինեն նրանք հայ, ուսու, թէ ֆրանսիացի:

ՆԱՄԱԿ ԱՍՏԻՈՒՆԻՅ

Օգոստոսի 17-ին

Այսօր հոգին յանձնեցին Վարչախմբի համալրարանի պրոֆէսոր Թումանյան:

Առաւօտեան, շողմնաւից բերելիս՝ դադարը չըջապատել էին աղագականները, համալրարանաւի ընկերները և ուսանողները: Գաղաղի վրա դրած էր հինգ պսակ աղագականների կողմից: Եկեղեցում քահանայներից մէկը ճառ կարդաց: Յուզարկաւորութիւնը կրում էր համեստ բնուրութիւն:

Պրոֆէսոր Թումանյան մահը այս քանի օրերս խօսակցութեան առարկայ է դարձել: Նրա յիշատակը այստեղի հայերի մէջ երկար կը մնայ, քանի որ մեզանում միշտ նրանից բժշկական օգնութիւն են ստացել, ասանց դասակարգի խորութեան, ամենքը՝ թէ հարուստ և թէ չքաւոր, որոնք ամբողջ օրերով չըջապատում էին հանգուցեալի տունը ամուսնու այն ամիսները, երբ նա գալիս էր Աստրախան, իր աշխատութիւնից հանգիստ գտնելու նպատակով:

Յ. Ս.

ՆԱՄԱԿ ԱՍՏԻՈՒՆԻՅ

Օգոստոսի 18-ին

Չը նայելով, որ մեր քաղաքի երկսեռ դպրոցները նիւթականապէս ապահով վիճակի մէջ են գտնուում, բայց ուսումնական մասը վերջին տարիներս շատ ողորմելի դրութեան մէջ է: Այդ պատճառի դրութիւնը գլխաւորապէս առաջ է եկել աւագ ուսուցիչների և աւագ ուսուցչուհու անհոգութեան, թուլութեան, կողմնադաժնութեան և իրանց պաշտօնում անձեռնհաս լինելու պատճառով:

Այդ վնասակար երևոյթի առաջն առնելու համար, դեռ նախկին հոգաբարձութեան ցանկութիւնն էր կարողանալու և Երևանի դպրոցների համար հրապարակ տալ բարձր կրթութիւն ունեցող մի ևս անհոգ և գործող անձնաւորութիւն, որը կարողանար իր հեղինակաւոր ձայնով և դիրքով դպրոցները անկեալ դրութիւնից բարձրացնելու, և այդ նպատակով հոգաբարձութիւնը առաջարկել էր միմիայն աւագութեան համար 800 բուրլի:

Բայց, տարաբաղաբար, հոգաբարձութեան այդ գեղեցիկ և նպատակայարմար դիտաւորութիւնը չի բարձրացել, թեմական ևստուջ հայր Մեկեանի ցոյց տուած այն կանօնի հիման վրա, թէ՛ «կանոնադրութիւնը թող չի տայ երկու դպրոցի մի աւագ ուսուցիչ կարգելու»:

Որքան մեզ յայտնի է, մեր երկսեռ դպրոցները շարունակաբար կառավարվել են մի տեսով կամ մի աւագ-ուսուցչով: Յիշենք միայն վերջին տարիներումս այդպիսիներին, որոնք էին Գալուստ Տէր-Մկրտչեան (Միաբան), Յակոբ Խոջամիրեան, Արիստոտել Յովհաննիսեան և Ստեփան Մալխասեան—որը աւագ ուսուցիչ էր հէնց նոյն կանոնադրութեան գոյութեան ժամանակ: Ինչ որ այժմ է,—որոնք ժամանակ մեր երկսեռ դպրոցների տուած արդիւնքը անհամեմատ մեծ է եղել, քան այժմ:

Թեմական տեսչի այդ տեսակ պատասխանի նպատակն այն էր, որ տղայացի դպրոցի համար աւագ ուսուցիչ նշանակվի մի պարոն, Ալէքսանդր Արմէնեանցը: Թեմական տեսուչը այդ պարոնին ներկայացրել էր հո-

գաբարձութեան, որպէս երկար տարիներ ուսուցչութեամբ պարապած, փորձված, այլ և երկու տարի (?) Գերմանիայում սովորած մի անձնաւորութիւն: Բայց, զփաղաքաբար, այդ պարոնը չարդարացրեց թեմական տեսչի յոյսը, այլ ընդհակառակը ցոյց տուեց թէ՛ աւագ ուսուցչի և թէ՛ լոկ ուսուցչի պաշտօնում իր անձեռնհասութիւնը, որի հնորհիւ կարողանալու դպրոցը վերջին տարին աւելի վատթար վիճակի մասնակց:

Այն ուսուցիչները, որոնք նախկին աւագ-ուսուցիչներ—տեսուչների ժամանակ յայտնի են եղած որպէս անընդունակ, դարձեալ շարունակելու են, իսկ Բաղբառ Մատթէոսեանի նման արժանաւոր ուսուցիչ և խմբի օգտակար անդամը հրաժարեցրած է, որով տղայացի դպրոցը զրկվեց մի եռանդուն և օրինակելի ուսուցչից:

Այդ տխուր երևոյթի դէմ նոյն դպրոցի հոգաբարձու Ալէքսանդր Ավագեանը, որը շատ մօտ կերպով ճանաչում է թէ՛ աւագ ուսուցչին, թէ՛ ուսուցիչներին, այլ և դպրոցում տեղի ունեցած բոլոր դէպքերին ակնառաստել և եղել, բողոքել էր թեմական տեսչին, բայց հայր Մեկեանը անուշադիր է թողել:

Այսպէս թէ՛ այնպէս, մեր երկսեռ դպրոցների համար խիստ կարեւոր է մի ևս անընդունակ, աշխատասէր և հեղինակաւոր անձնաւորութիւն: Այսպիսի պաշտօնի համար, որպէս զի մի նոր հասանք մտցվի ուսուցչական խմբի և դպրոցների մէջ, աշխատէ մեր հասարակութեան արդարացի բողոքը՝ մեր դպրոցների ուսումնական մասի վերաբերեալ, հետզհետէ սաստկանալով, վատ հետեւանք կուենանայ:

Մի շարքի մէջ մնացել մինչև դպրոցները բացվեն, բայց տեղիս երկսեռ դպրոցների ուսուցչական խմբերը դեռ չեն կազմակերպված: Մի քանի տարի է մեր դպրոցների համար ուսումնական տարին սկսվել է հոկտեմբերից, այս տարի էլ անշուշտ այդպէս կը լինի: Այդ էլ մի շարք է մեր դպրոցների համար:

Քաղաքացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մեզ հաղորդում են, որ այս տարի էլ, ինչպէս և անցեալ տարիները, Թիֆլիսի համարեալ բոլոր դպրոցներում աղատ տեղեր չառ լինելու համար մանուկների համար Միթէ ժամանակ չէ մտածելու նոր դպրոցներ հիմնելու Թիֆլիսում, կամ եղածները լայնացնելու, քանի որ ամբողջ Կովկասը իր յոյսը դրել է Թիֆլիսի դպրոցների վրա, որոնք ամեն տարի հարիւրաւոր երեխաների մերժում են՝ տեղ չը լինելու պատճառով:

Այս օրերս լոյս տեսաւ Բաֆֆիի անտիպ միացած մի վէպը, որ կրում է «Չարութեամբ» վերնագիրը և որի նիւթը վեր է առնված Թիֆլիսի հայերի կեանքից: Այս ինչ է ասում այդ վէպի մասին ինքն Բաֆֆին «Չարութեամբ» եւս գրելէ 1871 թուականին, Թիֆլիսում, ուր եւս իմ դործերի պատճառով ստիպված էի մի տարի և կէս մնալ: Վիպասանութեան նիւթն առնված է Թիֆլիսի հայերի կեանքից, գրված է աշխարհաբար լեզուով և միայն տեղ-տեղ թիֆլիսեցոյց բարբառով: «Չարութեամբ» մէջ ընկերացողը կը տեսնէ պատկերներ բարի և չար անձերի: Նա կը տեսնէ տարաբաղաման կրթութեան վնասակար հետեւանքները, բարբերի սպառնալիքները, բարոյական փտութիւն ժամանակիս չուայութիւնից և զեղխութիւնից և հայութեան զաղախարի օրընտրել ջնջուելու ժողովրդի մտքից, և ձգտողութիւն ժողովրդի դէպ օտարամիջ նորանուրթիւնները: Մեր տաղանդաւոր վիպագրողի այդ «գրչի փորձի» մասին մենք կաշխատենք մեր կարծիքը յայտնել:

Մեզ հաղորդում են Երևանից, որ այնտեղ լուր կայ, թէ Կարապետ Եղիսիպոստ Արմաղեան նշանակվում է Երևանի թեմի կառավարիչ: Այլապէս դեանք Շուշու թեմի առաջնորդն է:

Թիֆլիսի այգեդորձական դպրոցի կառավարիչ Ալաուդին հրաժարական է տուել իր պաշտօնից: Գիւղարտնեսական ընկերութեան խորհուրդը որոշում է նոր մարդ՝ այդ պաշտօնի համար:

Մենք ստացանք Սարմատի Հաւթիւն գիւղի

«Գրասիրաց ընկերութեան» կանոնադրութիւնը, որ սղագրված է այս տարի Թաւրիզ քաղաքում: Ընկերութիւնը, ինչպէս երևում է այդ տեսարակից, հիմնված է 1886 թւին և վերանորոգված 1893 թւին, նպատակ ունի ընթերցասիրութիւն տարածել Սարմատի հայերի մէջ: Նպատակը անկասկած գեղեցիկ է և մենք խորհուրդ ենք տալիս զործի զեկալարներին,—եթէ նրանք կան—լոկ հոսիսութեամբ չը բաւականանալ, ինչպէս կանոնադրութեան սղագրելն է, այլ և դործ կատարել:

Բագուի իգական գիմնադիպի դիրեկտորը դիմել է կովկասեան ուսումնարանական չըջանի հոգաբարձուին, խնդրելով թողաւորութիւն՝ լատիներէն լեզուի դաստաւորութիւն մտցնել Բագուի գիմնադիպում, որովք զի վերայիշեալ գիմնադիպում իրանց դասընթացիս աւարտող աշակերտները կարողանան մանել Պետերբուրգում՝ նոր բացվող բժշկական կուրսերը: «Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ կովկասեան ուսումնարանական չըջանի հոգաբարձուն թող է տուել լատիներէն լեզուի դաստաւորութիւնը մտցնել դիմահաղայի հինգերորդ դասարանից:

Առանձին գրքովով այս օրերս լոյս տեսաւ բժշկապետ Վահան Արծրունու մի ուսումնասիրութիւնը «Հիպոստիզ» անունով, որը մասնաւորապէս վերաբերում էր «Մուրճ» ամսագրի մէջ: Սա երկրորդ մասն է, և նիւթն է՝ բնական հիպոստիզը:

ՆՈՒՈՒՅ մեզ գրում են, «Օգոստոսի 20-ին Կարա-Մուրազ հայոց դպրոցի դահլիճում տուեց մի կոնցերտ: Քառաձայն խումբը բաղկացած էր 58 հոգուց՝ 21 կանայք և 37 տղամարդիկ: Խմբի մէջ կային ամեն դասակարգի մարդիկ՝ ուսուցիչներ, աշակերտներ, աստիճանաւորներ, վաճառականներ, և արհեստագործներ: Ժողովուրդը կոնցերտից շատ գոհ մնաց, բոլոր տղամակաները վաճառված էին: Հասարակութեան մէջ կային և շատ ուսանող ու վրացիք: Զուտ արդեւք մնաց մօտ 200 բուրլի: Կարա-Մուրազն իր խմբի մէջ մասնակցող պարոններից, տիւղիներէրից ու օրիորդներից ստացաւ երկու արծաթեալ ընծայ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՍՏԻՈՒՆԻՅ

Պ օ ս տ օ ն, օգոստոսի 18-ին

Երէկ մի արտանուր ոգևորութիւն կը տիրէր Մուրազի հայոց մէջ: Քաղաքէն և չըջապա գիւղերէն հաւաքված հայ երիտասարդաց խումբեր կանգնած էին այդ քաղաքին մի չքեղ ժողովարանին դրան առջև:

Յայտագրաբար հասան Պատմի, Լինի և Մէլի մի ծաղիկներով և դրօշներով դարձաւորված կառքեր: Արդէն ամեն ինչ պատրաստ լինելով՝ անմիջապէս սկսաւ թափուր քաղաքին երաժշտաց խմբին առաջնորդութեամբ:

Հայկական, ամերիկեան և յեղափոխական դրօշներու տակ զոյգ զոյգ կը քայլէին չորս քաղաքներու ջոկատները, որոց մէջտեղերը մի մի պսակալի ծիսաւոր կար: Հսկայ մէջքի մը, սև ձիու մը վրա աշտանակած՝ իր երկար թեկերով վեր բարձրացուցեր էր մի գեղեցիկ պսակ, որոյ վրայ «գոյնզգոյն ծաղիկացի» գրերով կը կարդացուէր ՍԱՍՈՒՆ օգոստոս 1894: Նոյն վերտաւորութիւնը կը կրէին սև փոքրիկ դրօշները արծաթե գրերով:

Մուրազի կարեւոր փողոցները չըջելէ վերջ թափուրը դարձաւ սրահ: Այն ատեն ամերիկացի օրիորդի մը մասնեւրում տակ դաշնակը հսկեց Տաւրիզից ու զիւրիկ եղանակը, խումբերը կանոնաւոր քայլերով յառաջացան սրահին մէջ, մինչև ամենը իրենց առանձին տեղերը հասան: Պատկերներ և դրօշները բեմին քովերը չարելէ վերջ՝ նստեցան ունկնդիրներին: Սրահին ճակատը կերելէին Մուրազի և ուրիշ մեծադիր պատկերները, իսկ չար մը ծաղիկ գաղաղբու մէջտեղ կերելէր մի կարմիր խաչ, կանաչ լուսնեղջիւրին մը վրայ բարձրացած:

Մի քանի վայրկեանի դադարէ վերջ ատենապետը բացաւ ժողովը, բացատրելով այդ օրուան հանգիսին խմատը և նպատակը՝ «Հոս եկած ենք այսօր ոչ թէ միայն սգալու մեր 10,000 կորիճ

ոստուցիներու մահը, այլ յաւիտեական վրէժ ուխտելու այն բռնակալ կառավարութեան դէմ, որ այս ոճրին ծանօթ և մահապարտ հեղինակն է»:

Իբրեւ առաջին ատենախօս ի բեմ հրաւիրուեցաւ հանրածանօթ միսիոնար Կրիշն:

«Չեր այդ սև դրօշները սուգ և մահ կը նշանակեն, բայց կարմիր դրօշներն ալ կեանք և յաւիտեական կաւեան. այսօր կը սգանք հայ ազգին ամենէն քաջ և աշխիւ զաւակաց կորուստը, նոյն ատեն կը տօնենք մի նոր օրուման, մի նոր բաղդի ծնունդը: Մեռաւ սիրազորով մայրը իր երկանց ցաւէն, բայց նա մի մանուկ ծնաւ: Ո՛վ է այդ նորածին մանուկը: Հայրենասիրութեան, միութեան, անկախութեան ոգին է, որ կեանք պիտի ներշնչէ ձեր թշուառ հայրենեաց»:

Ատենախօսը նոյն յուզումով լեզուով նկարագրեց Սասնոյ ստակալի ջարդերը 600-էն աւելի ունկնդրաց, հանեց մի բրդու խէն ջէր, ցոյց տուաւ ժանգոտ երկաթը, այն անգուրթ վայրենիներու զէնքը, որ այնքան թանգազին կեանքեր հնձեց մի տարի առաջ: Հայ ազգի ներկայ ցաւալի դրութեան վրա մի քանի դիտողութիւններ ընելէ վերջ, վարդէ գոյներով նկարագրեց ապագան և խրատուեց իր հայրենակից ամերիկացիները նոր եռանդով աշխատել ի նպաստ այս արդար զատին: Հայերին ալ յորդոր կարդաց համբարշտ և խոհեմ գործունէութեամբ աշխատել հայրենիքի փրկութեան համար:

Խօսեցաւ Լոնտօնէն նոր դարձած մի ամերիկացի տիկին, նկարագրեց Անգլիա տեսած սոստուցիները, և իր համակրանքը յայտնեց դէպի հայ ազգը:

Տր. Պալաւուկ ըննադատեց Ամերիկայի կառավարութիւնը, որ թող քաղաքականութեան մը կը հետեւի միշտ Արեւելի մէջ: «Իբրեւ Ամերիկեան մեծ հասարակութեան քաղաքացի, ամօթ կը զգամ, որ այս մեծ տերութիւնը ոչինչ ըրաւ Եւրոպայի մեծ պետութեանց դործին օգնելու, անաւանդ երբ մեր դործակցութիւնը այնքան արդիւնաւոր կրնար լինել»: Համակրելի ծերունին հայրական խրատներով յորդորեց հայ երիտասարդները ուսանել Ամերիկայի քաղաքական և ճարտարաւեստական հաստատութիւնները, ուչի ուշով քննել Ամերիկայի կրթական, կրօնական և ընկերական վիճակը և յետոյ միսիոնարներ դառնալ իրենց հայրենիքի մէջ՝ քաղաքակրթութեան աւետարանը քարոզելու:

Այս յորդորէն վերջ ներկայից մի քանիս քաղաքական ուղերձներ ըրին, ընդ որս և մի հաղաթապետ, որ հանգեւր պատուելու համար իր մի քանի ընկերներով համադրեաւ հագած ներկայ գտնուեցաւ ժողովին: Չխնայալանը խրատուեց հայերը մտնել զինուորական խումբերու մէջ և հոն զէնք կրել և դործածել սովորել:

Մուրազի գրադարանապետն խրատեց, որ իր բարեկամ հայերն ուսման հետեւին, քննեն իրենց ազգին անցեալը և ջանան ներկայով արժանի լինել անցեալին: «Թող ձեր նահատակեալ եղբայրներու յիշատակը միութեան և հայրենասիրութեան ոգի ներշնչէ ձեզ, ըսաւ, որ շուտ քայ այն օրը, որ Հայաստանի արծիւը սաւառնի վարդանայ երկրին վրա»:

(Մուրազի ընկերութեան անունն է՝ Արծիւ Հայաստանի):

Երկու հայ երիտասարդներու ձառերը ոգևորեցին հայ հանդիսականները, սաստուցի քաղաքական օրինակին հետեւում այս յորդորները և ազգային երգերը եռանդ ներշնչեցին ամենուն: Այդ սպաւորութեան տակ վերջացաւ ժողովը:

Արմէն

ՆԱՄԱԿ ԱՍՏԻՈՒՆԻՅ

Վ Է Ն Ն ա, 13/25 օգոստոսի

Իմ նամակներից մէկում խոստացայ գրել Վիէնայի Միթիթարեանների մասին: Կատարում եմ խոստումս այժմ:

Երկու անգամ այցելութիւն արի Միթիթարեաններին, առաջին անգամը ծանօթագայ նրանցից մի քանիսի հետ և տեսայ թանգարանը, գրադարանը և տղարանը: Միաբանների մի մասը և բոլոր աշակերտները, որոնք ուսանում են այդ տեղ, ամառվայ պատճառով տեղափոխվել էին Մասո գիւղը՝ իրանց սեփական այգիին: Միաբաններից մի երկուսը ինձ հրաւիրեցին հետեւալ օրը գնալ այդ գիւղը: Հետեւեալ առաւօտեան, դարձեալ գնալով նրանց մօտ, ծանօթացայ Յաւոր վարդապետ Տաչեանի հետ, որը կազմում է և սղագրում այդտեղ եղած հայերէն ձեռագիր-

ների ցուցակը Հայր Գր. Գալեմբերեանը բացակայ էր:

Ապա ես ներկայացայ արքայօրը, գերապատիւ Այտընեան եպիսկոպոսին: Դա մի պատկառելի ծերունի է, որի յօրեկեանը ինչպէս յայտնի է, շուտով պիտի կատարվի: Այնուհետև հրամայեալ տալով քաղաքի միաբաններին, նրանցից մէկի հետ գնացինք դիւղը, որը գտնուում է 1 1/2 ժամ-վայ հեռավորութեան վրա: Այնտեղ էլ ծանօթանալով մի քանի ուրիշ միաբաններին՝ հետո՝ ես այժմ կարող եմ յայտնել իմ ստացած տպաւորութիւնը վիճինայի Միթիթարեանների մասին:

Ընդհանրապէս տարածված կարծիք է, որ Միթիթարեանները, թէ՛ վիճինայի և թէ՛ վահանա-կի խորասուզված պատմական անցեալի մէջ մի կողմից, և միւս կողմից՝ նեղ կաթոլիկ հոգւով ներշնչված, բարոյովն չեն հետաքրքրվում այժմեան հայկական կեանքով և ազգային շարժումով: Նոյն իսկ շատերը կարծում են, թէ նրանք դէմ են այդ շարժմանը, դրանով են բացատրում և այն հանգամանքը, որ «Հանդէս Ամսօրեայ» ամսագիրը ոչինչ չէ գրում թիւրքաց-հայերի և ուսումնային ներկայ հասարակական ձգտումների մասին:

Փոքր է շատէ՛ ծանօթանալով վիճինայի Մեթիթարեանների հետ՝ (պատմաճանաչի նայելով նոյնը կարելի է կրկնել և վահանակեցիների մասին) կարող եմ ասել, որ այդ կարծիքը սխալ է, դռնէ նրանց երիտասարդ մասի վերաբերութեամբ, և ցանկալի է որ հասարակութիւնը աւելի ճիշդ գաղափար ունենայ նրանց մասին: Մի քանիսի մէջ ես նկատեցի մի այնպիսի ոգևորութիւն ներկայ ազգային մոմենտով, և այնքան հետաքրքրութիւն, որքան միայն շատ քչերը լուսաւորչական հոգեւորականներից կարող են ցոյց տալ... Որքան մեծ զայրոյթով նրանք բոլորը խօսում էին մի քանի անարժան բարձրաստիճան կաթոլիկ հոգեւորականների, մանաւանդ Աղաբեանի բռնած ընթացքի դէմ... Բայց այդպիսիները, ասում էին նրանք իրաւամբ, նոյն իսկ աւելի վատերը կան և լուսաւորչական հոգեւորականութեան մէջ... Ազգացրդ բերում էին Ալքեանը, Մեսրոբ եպիսկոպոսը և շատ ուրիշները...

Գալով «Հանդէս Ամսօրեային», նրանք դրա լուսնութեան բացատրում էին նրանով, որ ամսագրի ոչ բազմաթիւ բաժանորդների մեծ մասը թիւրքաց Հայաստանումն է, և եթէ որ և է բան գրվի հայոց հարցի մասին, անմիջապէս պիտի արգելվի նրա մուտքը թիւրքիս, որով ամսագիրը շատ մեծ կուտակուի, որովհետև Առաստանի և այլ տեղերի բաժանորդները աննշան թիւ են կազմում... Բերում էին և մի ուրիշ պատճառ, որը ես այստեղ մէջ չեմ բերի... Աւելացնենք և այն, որ նրանք պատրաստ են ամեն կերպ, իրանց կարողութեան չափ, օգնել հայոց գործին:

Սա իմ վերջին նամակն է արտասանմանից: Գ. Բազարեանց

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 օգոստոսի: Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչ օգոստոսի 22-ին ճանապարհ ընկաւ Լիբավա, ապա կերթաց արտասահման:

Վաղիվատուից «Нов. Время» լրագրին հետաքրքում են, Վաղիվատուի զփուրութիւնները ֆոր-մոզայում մեծանում են: Ապստամբները այդ կերպով ներքին պատերազմ են մղում. մինչև անգամ կանայք են պատերազմում: Եսպոնացի-ները, կատաղած յամառ դիմադրութիւնից և ամեն տեսակ հիւսնադութիւններից, անողորմ են դարձել և զաւթնութիւններ են կատարում, չը խնայելով կանանց և երեխաներին:

Բերլին, 23 օգոստոսի: Վիլհելմ կայսրը ճառ արտասանեց, որի մէջ յիշեց Ֆրանսիական դո-քի, որը պատերազմում էր յուսանառական քաջու-թեանով իր դախիններին, իր փառաւոր անցեալի, կապի համար, և գերմանական ժողովրդի մէջ տեղի ունեցած կուլի մասին, որը զէնք բարձրացրել էր զօրքի, իր օջախի, իր միութեան համար: Կայսրն ասեց, որ ներկայումս առանձին ոյժով արտայայտվում է հորհակալութեան բո-ցալատ զգացմունք դէպի այն բոլոր անձինք, որոնք կրում են կամ կրել են զինուորական համազգեստ, մանաւանդ դէպի կայսր Վիլհելմ I-ը: Ապապայ սերունդներին վիճակից պահպանել հանգուցեալ կայսրի ստեղծածը: Վերջաբանու-թեան մէջ կայսրը սաստիկ պատարակում էր սօցիալիստներին, որոնք բողոքեցին Սեզանի տա-

րեղարձը տօնելու դէմ, անուանելով նրանց պիտա-կան դաւաճաններ և սպառնաց արքային նրանց Կերմանիայից:

ՄՈՍԿՎԱ, 24 օգոստոսի: Գուման օրոշեց, որպէս զի Մոսկվան մասնակցի համառոտական ցուցահանդէսին: Պալիլիժն կառուցանելու և սկզբնական ծախսերի համար օրոշեց 15,000 ռ:

ԲԵՐԼԻՆ, 24 օգոստոսի: Յարբունիս են գրաւված սօցիալիստական «Vorwärts» լրագրի երկու համարները, մեծութիւնը վերաւորելու համար: Պատասխանատու խմբագիրը կալանաւորված է:

ՊԱՐԻՅ, 25 օգոստոսի: Կ. Պօլսից ստացված մանաւոր տեղեկութիւններին նայելով, սուր-թանը համաձայն է ընդունել հայկա-կան ըէֆօրմիսի քաղաքի, որ առաջարկել են երեք պետութիւնները:

Խմբագիր և հրատարակիչ՝
ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Օգոստոսի վերջին ըլց պիտի տեսնէ հան-գուցեալ ԱՌԱՔԵԼ ԲԱՆԱԹԱՐՆԵՐ

«ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ»

Խնդրում եմ այն անձանց, որոնց մօտ գտնվում են հանդուցեալի «Բառերի ցու-ցակը» և «Այրբեխարանը» զբոյնները, ու-ղարկել ինձ՝ անմիջապէս տպագրութեան յանձնելու:

«Ընթերցարանը» տպագրողները կարող են գիմել այս հասցեով՝ Шуша, книж-ный магазинъ Баграта Теръ-Саакянъ. (№ 97) 1—4

Ջ Գ Ր Ա Շ Է Ն Ի

Կիրակեան երկուս զարոյցների հոգա-բարձութիւնը յայտնում է ի զիտութիւն հայ հասարակութեան, որ աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը յի-շեալ զարոյցներում սկսվում է երկուշաբթի, օգոստոսի 28-ից: 1—1

ՑԵՆՁ ՈՒՆԵՑՈՂ

Մի երկուսարդ, որ վարել է մի քանի տա-րի գաւառական քաղաքներում ուսուցչի պաշտօն, ցանկանում է դասեր ունենալ: Գիտէ և հայկական ձայնագրութիւն:

Հասցէ՝ Михаилъ Сергѣевичу Шарбабчеву, Тифлисъ, Темныя ряды, собствен. д. № 2. (№ 97) 1—5

Մ Օ Ջ Դ Օ Կ Ի

Հայոց երկու սեռի զարոյցների համար հարկաւոր է մի հոգեւ ՋԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ուսուցիչ: Բացի ձայնագրութիւնից պէտք է տւանդէ և ուրիշ առարկաներ:

Յանկացողները թող դիմեն՝ МОЗДОКЪ, попечительству Армянскихъ училищъ. (№ 97) 1—3

ԹԷՀՐԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԻ համար պէտք է ՄԻ ՌԻՍՈՒՑԻՉ ԵՒ ՄԻ ՎԱՐՃՈՒՇԻ հայոց և ռուսաց լեզուների ու կար և ձեւի համար:

ԹԱԻՐԻՉԻ

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ համար պէտք են ԵՐԿՈՒ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐ հայոց և ռուսաց լե-զուների համար:

Երկու զարոյցների պայմանների մասին դիմել Հ. Առաքելեանին, Թիֆլիս, Բարե-գործական ընկերութեան գրասենեակը, Սեր-գիէվսկայա № 16: 2—3

(№ 87)

ՃԱՆՃԵՐԻ ԴԷՄ ՀԵՂԱՆԻԹ

Բ. ԿԵՂԵՐԵՆԻ ԸՆԿ. ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Ֆարբիկայի

Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ և ԱՆԵԼԻ նշանաւոր առեւտրականների մօտ:

Ամենաէական, հաստատ, մաքուր և միանգամայն անվտանգ միջոց ճանձների դէմ:

(№ 83) 2—2

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ օրիորդաց զարոյցի համար հարկաւոր է ռուսաց լե-զուի մի ՎԱՐՃՈՒՇԻ:

Յանկացողները պայմանների մասին թող դիմեն «Նշանագրին գրադարան», Ա. Դաւ-թեանին: (№ 93) 3—3

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

Ա. Տ Է Ր - Յ Ա Կ Ո Վ Բ Ե Ա Ն Ի

Ընդունում է զիշերօթիկ, կիսագիշերօթիկ և երթեւեկ աշա-կերտներ. պատրաստում է զինագիրք, ընդհանուր ուսումնարանի, կադետների կորպուսի և այլ ուսումնարանների համար: Գիշերօթիկներ ընդունվում են և ուրիշ ուսումնարանների աշակերտներ:

Հասցէն. ТИФЛИСЪ. Сололаки. Гановская ул., № 11. (№ 65) 2—3

ԿԵՕԼԷՐԻ ՓՈՇԻՆ ՅԱՏԱԿՆԵՐԸ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Նոյնպէս դռները, սանրուղտները, պատուհանները շրջանակները և առհասարակ ամեն փայտեայ անայրն կահկարասիքը, ինչպէս խոհանոցի սեղաններ, տախտակներ և այլն վաճառվում է ԱՄԵՆ ՏԵՂ ԵՒ ԲՈԼՈՐ նշանաւոր առեւտրականների մօտ:

Այդ փոշու միջոցով բոլոր յիշված առարկաները, թէ ներկված և թէ աննրկ, ուսուցվում են զրեթէ առանց աշխատանքի և աւելի էժան ու շուտ, քան թէ ուրիշ միջոցով: (№ 82) 2—2

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Պ. ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ա Ց Վ Ո Ւ Մ Է

Դ Պ Ր Ո Ց

Գ. Լ. Կ Ո Ւ Զ Ա Ն Օ Վ Ի

(Մուկրանակայա փողոց, տուն Կորգանովայի, № 12, վանքի մայր-եկեղեցու դիմաց): Ընդունելութեան քննութիւնները սկսվում են օգոստոսի 26-ից: Պարապմունքները — սեպտեմբերի 1-ից: (№ 94) 2—3

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՄՆՁՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթու-թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ձանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական հետեւութիւն, 2) Առեւ-տրական թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-յին), 4) Թուարանութիւն համրիչի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) զեղապրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլովակում, Ալեքսանդր Փրիզովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նազօրեայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэляну. (Ե. շ.) № 62 11—25

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՈՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՅԳԻ

Ս. Վ. ԱՐԴՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՑՆԱԲԱՋՈՒԿԻ

(Միքայելեան փ. № 154)

Երեկանների ընդունելութիւնը տեղի կունենայ օգոստոսի 25-ից:

Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 1-ից:

(№ 93) (17, 20, 24) 3—3

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Մեծ պահանջը և ահագին հոգալը մեր հնարած

ԾԱՂԿԵԱՅ ՕՂԸ-ԿՈԼՕՆԻ

ԳԼԻՅԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՕՆԻ ՆԿԱՐՆԵՐՈՎ

ԳԼԻՅԵՐԻՆԵԱՆ ՓՈՇԻՆ

ԷԿՍՏՐԱԿՑ ՊԱՐԱԿԱԿԱՆ ԵԱՍԱՄԱՆԻ ԵՒ ՐԷՋԷՒԱՅԻ ԾԱՂԻԿՆԵՐԻՑ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԿԻԿՆԵՐ և այլն

ստիպում է մեզ հետ մրցողներին ՆՄԱՆԵՑՆԵԼ ոչ միայն անունները, այլ և մեր մասնագիտութիւնների ներքին ապրելու, որպէս զի զրանով մօրեցիներն հասարա-կութիւնը և այդպիսով մեծացնեն իրանց արդիւնների վաճա-ռումը, և այդ պատճառով խնդրում ենք պատուարժան զնոյնե-րին, մեր արդիւնները դնելու ժամանակ, առանձին ուշադրու-թիւն դարձնել ֆիրմայի և գործարանական մարկայի վրա:

Բարձրագոյն հաստատված ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

4—12 (№ 73—ամս. 25)